

Թեանը մէջ գալու ըլլայ, հրաման ունենայ, եւ այս բանին վկայութիւն համարուի, երբ հրովարտակիր օրինակը Ապրո Պետրոսին ստորագրութեամբը եւ կնիքովը ցուցնեն եւ այնպէս կատարուի ամէն բան, ինչպէս որ մեր այս բուն իսկական հրովարտակիրն մէջ գրուած է» :1)

Հրովարտակը հետաքրքրական է եւ կարելոր իր ամբողջութեան մէջ: Հոն ցոյց կը տրուի, թէ Զուգայեցի հայերը (պէտք է հասկընալ Նոր Զուգայեցի) ունէին որոշ արտօնութիւններ Ռուսական կայսրութեան մէջ առեւտուր ընելու Պարսկաստանէն ներածուած ապրանքներով, զլխաւորաբար հում մետաքսով:

Ինձ պակսեցաւ Մեծն Պետրոսի եւ Նոր Զուգայեցոց միջեւ ստորագրուած համաձայնութեան պատճէնը: Լէօ կ'աւելցնէ թէ՛ «Պօճաները մոռանում են իրանց պարտաւորութիւնները, որ յանձն էին առել 1710-ի պայմանագրով: Նրանք մետաքսն այլեւս բացառապէս Ռուսաստան չեն տանում, այլ եւ Թուրքիա եւ այլ տեղեր: Բացի դրանից, Ռուսաստան տարած մետաքսը մեծաքանակ վաճառքի չեն ենթարկում, ինչպէս պայմանաւորուած էր, այլ իրանք խանութներ են բաց անում եւ մանրավաճառի տակ զնում: Այս պատճառով 1719 թուին Պետրոսը կարծում էր ջուգայեցիներին տուած արտօնութիւնները: Բայց այս դրութիւնը մի տարուց աւել չտեսց եւ 1720 թուին վերանորոգուեց 1710-ի պայմանագրերը» :2)

S. G. Benjamin իր Persia and the Persians գործին մէջ կը գրէ.

«Ժէ դարուն վերջը մետաքսի առեւտուրին մեծ մասը Պարսկահայոց ձեռքն էր, այն ատեն Պարսկական՝ բայց այժմ զլխաւորաբար Ռուսական հպատակ, ինչպէս որ կը շարունակուի

1) Հրովարտակիրն այս պատճէնը եւ ոչ թէ ուղղակի «Մասեաց Ազաւնի»էն առած եմ, այլ օգտուած եմ Լէօի «Պոջայական կապիտալը» գործէն (էջ 270-272), հրատարակուած Պետհրատ, Երեւան, 1934:

2) Անդ՝ էջ 272:

ըլլալ ներկայ (1887) ժամանակներս: Պետրոս Մեծ 1711-ին այս առեւտրականներուն հետ համաձայնութեան մտաւ, որպէսզի իրենց բոլոր մետաքսը Ռուսիայէն արտածեն, փոխանակ Թուրքիոյ վրայով, իսկ Հայերը, զործակցութեամբ Պարսից Շահին, ստացան անկէ Պարսկական մետաքսի առեւտուրին մենաշնորհ: Յայտնուեցաւ սակայն, որ անոնք խարդախութեամբ զործեցին, որով Ռուսիոյ հետ եղած համաձայնութիւնը չեղեալ նկատուեցաւ, իսկ Պարսկական մենաշնորհը ետ առնուեցաւ 1720-ին: Ասկէ վերջ Ռուսերը իրենք ձեռքն առին մետաքսի առեւտուրը՝ այդպէս ընել համոզուելով տեղեկութեանց համաձայն, որոնք տարածուած էին Աստրախան բրնակող արեւելեան Հնդկէ մը: Այս անհատը Մեծն Պետրոսի տեղեկացուց 1722-ին, թէ Գիլանի առեւտուրը հսկայ համեմատութիւն ստացած է, թէ 1,200,000 փառնտ Գիլանի մետաքս Թուրքիա արտածուած է նախորդ տարին: Այս մետաքսին արժէքը գնահատուած է 3,200,000 ռուբլի, հաւասար 2,400,000 տոլարի: Այն ատեն Ռուսերը իրենց նաւերը զետեղեցին Կասպից ծովու վրայ: Սակայն, Պետրոսի մահը եւ Պարսկաստանի մէջ խառնակութիւնները, Նատիր Շահի իշխանութեան ատեն, վերջ դրին Պարսկական մետաքսը մենաշնորհ ընելու Ռուսական նպատակին» :3)

Նախ պատմական թուականներու մանրամասնութեանց տարբերութիւն մը կայ Լէօի եւ S. G. W. Benjamin-ի վկայութեանց մէջ: Առաջինը 1710, իսկ երկրորդը 1711 թիւը կը նշանակէ Մեծն Պետրոս եւ Զուգայեցի հայոց միջեւ կնքուած համաձայնութեան իրր թուական: Հոս ճշդում մը ընելու ի վիճակի չեմ:

Այս վկայութեանց մէջ կը յարուցուի ուրիշ խնդիր մը: Թէ՛ Ռուսները եւ թէ՛ Պարսիկները նկատեր են, իրր թէ Հայոց խարդախ առեւտուրը եւ ատկէ մղեալ Հայոցմէ ետ առեր են անոնց արուած մենաշնորհները եւ չեղեալ նկատեր են համաձայնութիւնները: Եթէ Անդ-լիացի գրողը այդ կարծիքը ունի, ես ատիկա բնական կը գտնեմ, սակայն չեմ գիտեր, թէ

3) Հրատ. Լոնտոն, 1887, էջ 416: